Հայ Բեմի Անզուգական Վարդուհին

Դոկ. Մարի Ռոզ Աբուսէֆյան

Դժվար է հրաժեշտի խոսք գրել մի անզուգական դերասանուհու, հավատարիմ ընկերոջ, ճշմարտության հետեւորդի, բյուրեղյա անձնավորության, խորը հոգու տեր մարդու՝ Վարդուհի Վարդերեսյանի մասին:

Իր երկարամեա բեմական գործունեության մասին հարյուրավոր էջեր են գրվել, դեռ նույնքան էլ կը գրվեն անշուշտ, եւ իր բազմահազար երկրպագուները ովքեր դեռ կենդանի են, կը շարունակեն կրել այս անկրկնելի դերասանուհու ստեղծած կերպարների հմայքը իրենց հոգում:

Մեծ արվեստագետները երբեք չեն մեռնում: Նրանք միայն հեռանում են հոգնած կամ հանկարծակի, մեզ թողնելով իրենց բացակայության տխուր փաստը, սակայն նրանք շարունակում են ապրել յուրաքանչյուր հանդիսատեսի հոգում, աչքերում, ականջներում թողած իրենց ստեղծած կերպարների պատկերով, ձայնով, շարժումներով, իրենց տված հոգեկան հարստություններով:

Անկարելի է մոռանալ Վարդուհու ստեղծած առաջին դերը՝ Մարգարիտը, հայֆիլմի ՛՛Պատվի համար՛-՛ում, նրա աչքերի խորը նայվածքը իր հոր գողության պահին, որը թափանցում է յուրաքանչյուր դիտողի հոգին ու մնում այնտեղ: Սարոյանի ՛՛Իմ Սիրտը Լեռներում է՛՛, ներկայացման մեջ Ջոնիի անզուգական կերպարը, նրա կերպարանափոխությունը կանացի Վարդուհուց—պատանի Ջոնին, որն իր գլըխկոնծիներով, սուլել սովորելու իր փորձերով, իր շարժումներով, հպարտ քայլելով ու ձայնափոխությամբ, պատանու հափշտակությամբ աշխարն ու մարդկանց ճանաչելու անմիջական ձգտումով ոչ միայն բարձրագույն տեղ գրավեց ազգային թատերային պատմության մեջ, այլ դաջվեց ու մնաց յուրաքանչյուր հանդիսատեսի հոգում ու աչքերում, նրա ունկերում թողնելով պատանու իր առույգ ու հաճելի ձայնը: Նպարավաճառ պրն.Կոսակից հաց խնդրելուց առաջ նրա համով, խորամանկ հարց ու փորձը Չինաստանից սկսած մինչեւ ընտանիքի անդամների որպիսությամբ հետաքրքրվելը: Կամ խաղողի գողությունից հետո հորը իր վախեցած հարցումը՝-- *՛՛Սա գողությո՞ւն է, պապա՛*: Սարոյանի թատերգության մեջ ոչ կենտրոնական դերը, Ջոնին, Վարդերեսյանը դարձրեց թատերգության հիմնաքարը: Պատանի Ջոնիի խոցված սրտով արտաբերվող խոսքերը՝ *՛՛--Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, պապա, բայց ինչ-որ մի տեղ մի բան սխալ է՛՛*, դարձրեց հնչող ճշմարտություն: Անկարելի է ոչ միայն մոռանալ, այլ չսիրել, չկապվել ու հոգում չպահել՛ Ջոնի-Վարդերեսյանի կերպարը: Յուրաքանչյուր շարժումն ու արտահայտությունը այնքան բնական, անմիջական, ոչ մեկ չափազանցություն, ոչ մեկ կեղծ ելեւէջ, հանդիսատեսին գրավելու ոչ մեկ էժանագին միջոց: Սա է մեծ արվեստագետի տարբերությունը, երբ բեմում անմիջականորեն հանդիսատեսի աչքի առաջ ստեղծում, քանդակում ու շնչավորվում է մի կերպար, մի էություն միս ու արյուն դարձած, որին հանդիսատեսը այդ պահին է ճանաչում:

Վարդերսյանի ստեղծած անզուգական կերպարների շարքը այնքան շատ ու բազմազան է, այնքան կատարյալ, որ անկարելի է բոլորին առանձին-առանձին հիշատակել այս պահին: Միայն պիտի ավելացնեմ, որ Վարդերեսյանի ստեղծած յուրաքանչյուր կերպար մնայուն տեղ ունեն իրենց բացահայտման տարողությամբ հայ բեմական արվեստում:

Ես Վարդերեսյանի հետ ծանոթացա, երբ նոր էի սկսել իմ բեմական գործունեությունը: Երկուսս էլ արեւմտահայ լինելով, անմիջապես կապվեցինք, որովհետեւ խտրականությունը տեղացու եւ արեւմտահայի բացարձակ էր այդ տարիներին, թեեւ Վարդուհին իր ճանապարհը արդեն հարթել էր, իսկ ես նոր էի սկսել: Մեր հանդիպումներում միշտ արեւմտահայերեն էինք խոսում, անսալով մեր շրջապատի դիտողությունները, կամ անցանկալի ակնարկները :

Մեր հանդիպումները ռադիոյում, հեռուսատեսությունում կամ որեւ այլ տեղ ջերմ ու հիշարժան են: Անկարելի էր Վարդուհուն ճանչել ու չկապվել իրեն, անկարելի էր աշխատել իր հետ ու չսովորել իրենից, չհիանալ իր լրջության, ճշմարտախոսության, իր կյանքայնության եւ իր աշխատասիրության վրա: Ամենափոքր դերն անգամ, որը կարող էր աչքերը փակ, անմիջապես խաղալ, փորձում էր ամենայն լրջությամբ, բոլորի հետ ժամերով փորձերի գալով:

Անժխտելի փաստ է, որ այդ սերունդը, որը տաղանդավորների մի ամբողջ հավաքածու էր, աշխատանքային զարմանալի կարգապահություն ունեին, որը ցավոք բացահայտորեն պակասում է այսօրվա սերունդին:

Վարդուհին նաեւ անկեղծ բարեկամ էր, որը ազդեցություններով բարեկամություն չեր ավարտում:

Դժվար ասպարեզ է բեմական արվեստը եւ մտնել այնտեղ ու էությամբ անբասիր մնալ, քչերին է հաջողվում: Վարդերեսյանը արեւմտահայի իր դաստիարակությամբ, իր խառնվածքով, մնաց բոլորից տարբեր, մնաց իրապես մեծ ստեղծագործող ու բոլորին սիրելի:

Ես վերջին անգամ իրեն հանդիպեցի հինգ տարի առաջ իր թոռնուհու հետ, որը իր կրկնօրինակը լիներ կարծես: Մենք նույն ջերմությամբ շարունակեցինք մեր խոսակցությունը, կարծես տարիները չէին բաժանել մեզ: Նույն հմայիչ Վարդուհին էր, հարազատ, անկեղծ ու ինչպես միշտ կյանքով լի, թեեւ տարիներ էին կուտակվել մեր բաժանումից հետո: Ժամանակի քչության ափսոսանքով բաժանվեցինք հաջորդ անգամ ավելի երկար տեսակցության խոստումով: Երկուսս էլ այնքնա ոգեւորված էինք, որ երբեք չմտածեցինք, որ դա կարող է մեր վերջին հանդիպումը լինել:

Սիրելի Վարդուհի, իմ բարեկամ եւ պաշտելի դերասանուհի, հպարտ եմ, որ ճանաչել եմ քեզ, կիսվել քեզ հետ իմ սրտի զեղումները, որ խաղացել եմ քեզ հետ, համերգների մասնակցել քեզ հետ, որ ծառայել եմ նույն հայ արվեստին, որի զարդն ես եղել դու:

Այսօր դու բացակա ես ֆիզիկապես, սակայն մնալու ես հայ բեմի լեգենդար Ջոնին եւ Մարգարիտը, Քլերը, Անույշը, Իշխանուհին, եւ տասնյակ այլ դերեր, որոնք քանդակված մնալու են հայ բեմական արվեստի պատմության եւ բոլոր նրանց հոգում

ու հիշողության մեջ, ովքեր երջանկությունն ու բախտը ունեցան քո հանդիսատեսը լինելու:

Իսկ նրանք, ովքեր ճանաչել են քեզ եւ վայելել քո բարեկամությունը քո կորուստը սգալով հանդերձ երջանիկ են քո թողած անմոռաց հիշատակներով:

Դու Ռումինիայից եկար քո հայրենիքը զարդարելու հայ բեմը եւ դառնալու նրա նշանավոր, անմոռաց աստղը:

Այսօր հայ հանդիսատեսը խորը երախտագիտությամբ է ճանապարհում քեզ դեպի հավերժություն, եւ շնարհակալ է, որ հարստացրիր իրեն քո տաղանդով, քո մարդկային արժանիքներով, որ անմնացորդ ծառայեցիր հայ բեմին:

24 Նոյեմբերի, 2015
Սան Ֆրանսիսկո